

«Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատէխնոլոգիայի» լաբորատորիա

Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատէխնոլոգիայի լաբորատորիայի հետազոտական հիմնական ուղղությունները նվիրված են՝

- Մանրէների աճի ուսումնասիրումը տարբեր պայմաններում և ֆիզիկական և քիմիական գործոնների ազդեցության մեխանիզմներում բջջաթաղանթների դերի բացահայտմանը
- Մանրէների կողմից ջրածնի արտադրության մեխանիզմների և կենսաէներգետիկայի ուսումնասիրումը, դրանց կարգավորման նոր ուղիների բացահայտումը և կիրառման երաշխավորությունների մշակմանը
- Հայաստանի տաք աղբյուրների ծայրահեղասեր մանրէների բազմազանության ուսումնասիրությանը և դրանց կենսատէխնոլոգիական ներուժի գնահատմանը
- Հայաստանի տարբեր սննդամթերքի կաթնաթթվային մանրէների ուսումնասիրմանը և կենսատէխնոլոգիայում կիրառման նոր ուղիների մշակմանը
- Հայաստանի ֆլորայի էնդեմիկ, վտանգված կամ հազվագյուտ տարբեր բուսատեսակների մեկուսացված կուլտուրաների ստացմանը, դրանց հատկությունների ուսումնասիրմանը և կիրառման ուղիների մշակմանը
- Հայաստանի կենդանի օրգանիզմների և սննդամթերքի մանրէներով աղտոտվածության բացահայտմանը և դրանց կենսաանվտանգության գնահատման մեթոդների մշակմանը